ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Կ. Դրամբյանի (լիազորագիր, տրված՝ 26.11.2019թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված (20.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/88 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 19.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ՝ համաձայն որի՝ այն կազմված է ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանի «Օրինակելի ձև»-ին համապատասխան (կից փաստաթուղթ թիվ 1, արված նշումները):

Հրավերով գնման առարկա է հանդիսանում բժշկական պարագաների ձեռքբերումը թվով Հրավերի թվով 148 չափաբաժիններով (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները):

Հրավերի «ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» Հավելված թիվ 6-ը՝ այդ թվում նաև 3.3 և 8.13 կետերը (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները), ամբողջությամբ համապատասխանում են «Օրինակելի ձև»-ին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

Հրավերի «ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» Հավելված թիվ 6-ի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ը (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) չի համապատասխանում «Օրինակելի ձև»-ով հաստատված Հավելված թիվ 1-ին (կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները):

Հրավերի «ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» Հավելված թիվ 6-ի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 2-ը (կից փաստաթուղթ թիվ 7, արված նշումները) չի համապատասխանում «Օրինակելի ձև»-ով հաստատված Հավելված թիվ 2-ին (կից փաստաթուղթ թիվ 8, արված նշումները), բացի այդ՝ Հրավերի Հավելված 2-ում նշված «….90 բանկային օրվա ընթացքում….» սահմանումը (կից փաստաթուղթ թիվ 7, արված նշումները) չի համապատասխանում ինչպես «Օրինակելի ձև»-ի, այնպես էլ Հրավերի պայմանագրի 3.3. կետերով ամրագրված «….30 աշխատանքային օրվա ընթացքում….» սահմանումներին (կից փաստաթղթեր թիվ 3 և 4, արված նշումները):

Ընկերությունը հայտնել է, որ ներկայացված փաստաթղթերը փաստում և ապացուցում են, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով

բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2019թ. դեկտեմբերի 10-ի 1 որոշմամբ հաստատված Հրավերի «ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»Հավելված թիվ 6-ի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ը և «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 2-ը չեն համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված համապատասխան «Օրինակելի ձև»-երին:

«Խաչպար» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի ընթացակարգը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրել է ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում նշված ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2019թ. թիվ 08-502 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019թ. թիվ 597-Ա հրամանով հաստատվել են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը: «Օրինակելի ձև» արտահայտությունը չի ենթադրում ձևանմուշից շեղվելու անհնարինություն:

Ցանկացած օրինակելի ձևում պարտադիր պայման է հանդիսանում բովանդակային պահանջների պահպանումը:

Վերոնշյալ 597-Ա հրամանով հաստատված բոլոր հրավերներում հայտը պատրաստելու հրահանգում ներառված է դրույթ, համաձայն որի, «Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները», ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է բովանդակային պայմանների պահպանմամբ օրինակելի ձևից շեղվելու օրինաչափությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետևայսու նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Գնման առարկայի բնութագրերը՝ այդ թվում դրանց ձեռքբերման և վճարման պայմանները, յուրաքանչյուր կոնկրետ գնման համար սահմանում է կոնկրետ Պատվիրատուն, հաշվի առնելով իր կարիքները և ֆինանսական հնարավորությունները: Հրավերի վճարման պահանջը ընդհանուր է և միանման բոլոր հնարավոր մասնակիցների համար:

Բժշկական ծառայություններ մատուցող ընկերություններում ապրանքների սպառումը ուղղակիորեն կապված են հիվանդների այցելությունների քանակներից, նրանց առողջական իրավիճակից տվյալ պահին: Այս ցուցանիշները բավականին փոփոխական են և դրանցով պայմանավորված Պատվիրատուների մոտ առաջանում են փաստացի կարիքի փոփոխություններ: Գնման ժամանակացույցով կոնկրետ ամսում կամ եռանսյակում ապրանքի կոնկրետ քանակ նախատեսելու դեպքում Պատվիրատուն պարտավորություն է ստանձնում ամբողջությամբ ձեռքբերել նախատեսված քանակը նախատեսված ժամկետում և վճարել դրա դիմաց: Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ պատվիրատուն ձեռք է բերում Ապրանքի ոչ հարկավոր քանակ: Առաջանում է նաև ժամկետնանց ապրանքներ ունենալու հավանականությունը: Արդյունքում Պատվիրատուի ֆինանսական միջոցները բաշխվում են ոչ արդյունավետ: Այս և այլ հարցերի

կարգավորման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը 22/07/2016թ. թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությամբ պաշտոնապես դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և ստացել պարզաբանում: Պատասխան պարզաբանման մեջ, որն ըստ էության հանդիսանում է մեթոդական ցուցում, առկա է հետևյալ մոտեցումը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Գրության մեջ նշված գնման առարկաների մասով տարվա ընթացքում առկա է լինում փաստացի կարիքի փոփոխություն, առաջարկում ենք այդ գնման առարկաների գնման գործընթացը կազմակերպել դրանց համար գնումների պլանով հաստատված /կամ գնումների պլանում համապատասխան գումարը ներառելիս դրա հաշվարկի հիմքում ընկած/ ամբողջ քանակի համար՝ հրավերով նախատեսելով, որ մասնակիցները պետք է գնային առաջարկը ներկայացնեն այդ խմբաքանակի համար, իսկ գնման առարկաները փաստացի կմատակարարվեն՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի:» (Գրությունները կցվում են): Այսինքն, գնման ժամանակացույցով բաշխվածք չներկայացնելը և սահմանված ընդհանուր տարեկան քանակի շրջանակներում ըստ պատվիրատուի պահանջի մատակարարումներ իրականացնելն իրավաչափ է, կարգավորված է հենց ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և բխում է Պատվիրատուների շահերից:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի նպատակներից է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ: Սակայն Օրենքում չկա մի դրույթ, որով մասնակցի շահը գերադասվի Պատվիրատուի կարիքին, ուստի ձեռքբերման հիմքում պետք է դնել պատվիրատուի փաստացի կարիքը:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները, Պատվիրատուն գտնում է, որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնման ընթքացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և Ընկերության բողոքը հիմնավոր չէ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար թղթային ձևով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 10.12.2019թ.:

2. Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. թիվ 1 որոշմամբ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 24.12.2019թ. թիվ 08-502 գրությունը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով հաստատվել են գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով թղթային ձևով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթ, որի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. թիվ 1 որոշմամբ:

Հրավերով հաստատվել է թիվ 6 հավելվածը՝ ապրանքի մատակարարման պայմանագրի նախագիծը (հետայսու նաև՝ պայմանագրի նախագիծ), այդ թվում նաև՝ պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

Պայմանագրի նախագծի «Պայմանագրի գինը և վճարման կարգը» սահմանող 3-րդ կետի 3.3 կետով սահմանվել է հետևյալ դրույթը. գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման

ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, **ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում**, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Վերոհիշյալ դրույթը համապատասխանում է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով (հետայսու նաև՝ Հրաման) հաստատված բաց մրցույթի հրավերի օրինակելի ձևին:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 2 հավելված՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ վճարումն իրականացվելու է սահմանված կարգով **Ապրանքը կամ դրա մի մասը ընդունելու օրվանից հաշված 90 բանկային օրվա ընթացքում:**

Նույն հավելվածով սահմանվել է, որ վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Ընդ որում՝ հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

Այսպիսով՝ Հրամանով հաստատվել է վճարման ժամանակացույցի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**

			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

***** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ***

Ընթացակարգի հրավերով վճարման ժամանակացույցը նախատեսվել է հետևյալ ձև.

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**
1-148	բոլորը	բժշկական պարագաներ	Վճարումը իրականացվելու է սահմանված կարգով Ապրանքը կամ դրա մի մասը ընդունելու օրվանից հաշված 90 բանկային օրվա ընթացքում

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***
***** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ***

Անհրաժեշտ է նկատել, որ համաձայն՝ www.gnumner.am տեղեկագրում հրապարակված «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների

պլանի՝ ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի 3-րդ կետը, ինչպես նաև նույն պայմանագրի թիվ 2 հավելվածը, դրանք համադրելով ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով հաստատված բաց մրցույթի հրավերի օրինակելի ձևի հետ, գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերի վճարման ժամանակացույցն անհրաժեշտ է համապատասխանեցնել նույն հրավերով հաստատված պայմանագրի նախագծի 3-րդ կետի և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով հաստատված օրինակելի ձևի պահանջներին:

Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, **ըստ փաստացի պատվերների:** Կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: **Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:**

Հրամանով հաստատված օրինակելի ձևով սահմանվել է, որ ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Եթե պայմանագիրը կնքվում է **«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա «մատակարարման ժամկետը» սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:**

Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի 8-րդ կետի 8.15-րդ ենթակետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ընդ որում՝ Հրամանով հաստատված օրինակելի ձևով սահմանվել է, որ սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հրամանով հաստատված օրինակելի ձևի համաձայն՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Միևնույն ժամանակ տվյալ կետի համար սահմանվել է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծից սույն նախադասությունը հանվել է, միևնույն ժամանակ պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ նշվել է, որ ապրանքի մատակարարման սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից: Տվյալ դեպքում, գտնում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանը, հրավերում պետք է նշվի, որ մատակարարման ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից վիճարկվող՝ մատակարարումներն ըստ փաստացի պատվերների իրականացնելու պայմանին, ապա գտնում եմ, որ սույն մասով հրավերի պայմանագրի նախագծում անհրաժեշտ է նախատեսել պայմանագրի առավելագույն գին և առավելագույն քանակներ, որոնց շրջանակներում Պատվիրատուն պատվերի հիման վրա կարող է ձեռք բերել ոչ ամբողջական քանակները:

Անդրադառնալով նաև մատակարարումները ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնելու պահանջին, գտնում եմ, որ այն չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ հրավերում պահպանվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով սահմանված պահանջը և **առաջին փուլի մատակարարման համար սահմանվել է առնվազն 20 օրացուցային օր**, իսկ հետագա մատակարարումների համար՝ ըստ փաստացի պատվերների, ոչ ուշ քան 3 աշխատանքային օր:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերը վերոհիշյալ կետերով անհրաժեշտ է

համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի N 597-Ա հրամանով հաստատված բաց մրցույթի հրավերի օրինակելի ձևին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից վկայակոչված հրավերով սահմանված այն դրույթին, որ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները, ապա հայտնում եմ, որ խոսքը տվյալ դեպքում վերաբերում է **մասնակցի** կողմից հրավերով նախատեսված տեղեկությունները ներկայացնելուն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն վերոհիշյալ մասերով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ մրցույցի հրավերում կատարել սույն որոշման մեջ նշված փոփոխությունները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**